

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1959 թուոյ ընթացին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբազայրեւո տաճարներու հետեւեալ բարեպաշտական նուէրներ :

- 1. — Երուսաղէմէն Տիկ. Նեկտար Շէօնձէլեան, մէկ ճերմակ սեղանի ծածկոց Ս. Յակոբայ Ասպ Սեղանին համար :
- 2. — Երուսաղէմէն Օր. Զապէլ Նիկողոս Պ. տէփեան, մէկ նուրբ կարմիր բանուած շղարչ կենաց Փայտի համար :
- 3. — Կալկաթայէն Տէր եւ Տիկ. Ստեփանոս, երկու սեղանի ձեռագործ ծածկոց, մին Ս. Գերեզմանի եւ միւսը Աստուածամօր գերեզմանի համար : Մետաքս կտոր մը թռչնազարդ եւ ծաղկազարդ Աւետարանի բռնիչ մը եւ անուշ խունկ, եւ վարագոյրցու սե բանուած կտոր :
- 4. — Երուսաղէմէն Տիկ. Ուսաննա Վարդերեսեան, ձեռագործ կորբուրայ մը Ս. Յակոբայ :
- 5. — Երուսաղէմէն Թամարգացի Տիկ. Աննա Պարսամեան, մէկ վարագոյր Ս. Յակոբայ :
- 6. — Պէյրուսթէն Տիկ. Վիքթորիա Միտրեան, բարակ ոսկի պարանշան Ս. Աստուածածնայ պատկերին :
- 7. — Պէյրուսթէն ձէպէլ Մուսայի Տիկին Վարդուհի Քիրտեան, գորգ մը Ս. Գերեզմանին :
- 8. — Հալէպէն Մարի Քեչեճեան, նայլոն կտորի վրայ ձեռագործ ճերմակ սկիհի ծածկոց մը եւ երկու ձեռաց խաչի բռնիչներ :
- 9. — Տիկին Խաչատուրեան, զոյգ մը թաւշեայ վարագոյրներ Ս. Յակոբայ Տաճարի դասի սիւներու վրայ գտնուող Աստուածամօր նկարներուն համար :
- 10. — Պէյրուսթէն Տիկին Մարիամ Զազմագճեան, փուլի գործ կարմիր Աւետարանի բռնիչ մը Ս. Յակոբայ :
- 11. — Պէյրուսթէն Տիկին Մարի Եօզղաթեան, Աւետարանի եւ խաչի բռնիչ Ս. Յակոբայ :
- 12. — Պոլսէն Տիար Հմայեակ Էօզղաչի, մէկ սեղանի ծածկոց արծաթաթել Ս. Յակոբայ Ասպ Սեղանին, եւ մէկ անձեռոց պատարագչի :
- 13. — Դամասկոսէն Զարուհի կրճըրեան, մէկ մասի ծածկոց Ս. Յակոբայ :
- 14. — Պէյրուսթէն Եղիսաբեթ Մաթոսեան, մէկ ձեռագործ ճերմակ մասի ծածկոց :
- 15. — Պէյրուսթէն Նուէր Արարկիրեան, մէկ կանաչ Աւետարանի բռնիչ Ս. Յակոբայ :
- 16. — Պէյրուսթէն Տիար Յովհաննէս Մոսկոֆեան, զոյգ մը պատարագչի չողաթափ յուլունքազարդ :
- 17. — Պէյրուսթէն Օր. Ուսաննա կիրիքճեան, մէկ փոքր ոսկէ սիրտ եւ մէկ փոքր խաչ Աստուածամօր նկարին համար ի Ս. Յակոբ :
- 18. — Հալէպէն Տիկ. Աղաւնի Պալլըգեան, ձեռագործ մասի ծածկոց մը Ս. Գերեզմանին :
- 19. — Նիկոսիայէն Օրբորդ Պայծառ Արազլինճեան, երկու արծաթեայ կանթել Ս. Փրկչին :

- 20. — Թրիբուլէն Արշալոյս Մոսկոֆեան, մասի ծածկոց մը Ս. Յակոբայ :
- 21. — Ամմանէն Տիկ. Մարի Կոչկակարեան, ձեռագործ խաչի բռնիչ մը Ս. Յակոբայ :
- 22. — Հալէպէն Տիկ. Մարի Պուրուսուգեան, մէկ ոսկի մատանի Աստուածամօր նկարին որ ի սեան Ս. Յակոբայ :
- 23. — Երուսաղէմէն Տիար Դանիէլ Մարգարեան, 21 աշտանակի մետաղեայ ընկալուչներ Ս. Յակոբայ Տաճարին, եւ 8 հատ ալ՝ Համբարձման մատրան աշտանակներու համար :
- 24. — Ամմանէն Տիկին Լալիսիմէ Պալեան, սկիհի ծածկոց մը Ս. Յակոբայ :
- 25. — Քուէյթէն Օր. Մարի Պուրուճեան, երկու մետաղեայ ծաղկամաններ Ս. Գլխադրի :
- 26. — Երուսաղէմէն Քոյր Վարդանուշ Պարունեան, մէկ ճերմակ ձաշու գրակալի ծածկոց :
- 27. — Երուսաղէմէն Տիկ. Զապէլ Օհանեան, ձաշու գրակալի փուլազարդ ճերմակ շապիկ մը Ս. Յակոբայ :
- 28. — Տեսինէն Տիկին Մարիամ Վարդպետեան (Ս. Յինցի), ձեռագործ խաչնուսթեան սեղանի ծածկոց մը Ս. Յարութեան :
- 29. — Տեսինէն Տիկին Սաթեմեիկ Դասկարեան (Պրուսայի), ասեղնագործ ճերմակ կտոր խաչի բռնիչ մը :
- 30. — Երուսաղէմէն Տիկին Մարի Յակոբեան, ձեռագործ սեղանի ծածկոց մը Ս. Աստուածածնայ Տաճարին :
- 31. — Երուսաղէմէն Քոյր Վարդանուշ Պարունեան, Ս. Սեղանի ճերմակ ձեռագործ ծածկոց մը Ս. Յարութեան Տաճարին. — ճերմակ ձեռագործ Ս. Սեղանի ծածկոց մը Ս. Յարութեան Տաճարի Երաշխաւոր Ս. Աստուածածնի խորանին համար :
- 32. — Բեթղեմէն Օր. Գեղուհի Իսկէնտերեան, ոսկի ականազարդ մատանի մը Ս. Աստուածածնայ նկարին :
- 33. — Երուսաղէմէն Տիկին Մարի Գէորգեան, արծաթ մարդանկար մը Ս. Աստուածածնայ նկարին, իր ամուսնոյն յաջող գործողութեան աւթիւ :
- 34. — Պէյրուսթէն Տիկ. Շաքէ Մարտիրոսեան, ոսկի փոքրիկ արգաղիւր նուէր մը Ս. Աստուածածնայ նկարին :
- 35. — Երուսաղէմէն Անժէլ Պալապանեան, սեղանի ձեռագործ ծածկոց մը Ս. Աստուածածնայ Տաճարին :
- 36. — Երուսաղէմէն Քոյր Վարդանուշ Պարունեան, ձաշու գրքի գրակալի շապիկ մը Ս. Աստուածածնայ եկեղեցիին :
- 37. — Մարի Վարձպետ, Ս. Սեղանի երկու

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## Հ Ն Ո Ա Գ Ի Ի Ն Ե Ր

Դեկտ. 28-ին, Վեհափառ Թագաւորի արաստեմանէն վերադարձին առքիւ, Ս. Արուստյա Ընդհ. Գործոց Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. հետեւեալ խնդակցութեան հեռագիրը տուաւ :—

«Յանուն իմ, եւ յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու Հայց. եկեղեցւոյ եւ Հայ համայնքի զառակներուն, կր շնորհաւորեմ Ձերդ Վեհափառութիւնը ի Յորդանան Ձեր ապանով վերադարձին առիքով, եւ կր հայցեմ Ամենակալ Աստուծմէ պահել Ձերդ Վեհափառութիւնը ազգին եւ հայրենիքին համար » :



Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., յանուն իրեն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու Հայ համայնքին շնորհաւորական հեռագիրներ ղրկեց հետեւեալ պետական բարձրաստիճան անձանց, անոնց աստիճանի բարձրացման կամ պետական յասուկ շխնշանով պատուուած ըլլալուն առիքով :

Ն. Ա. Բ. Գանժաւանց իշխանին՝ անոր Զօրավարութեան աստիճանի բարձրանալուն առքիւ :

Ն. Բ. Շէրիժ Ազատկ Համիտ Հայմակի, Աստղագիտական օտանալուն առքիւ :

Ն. Վ. Վարչապետ Հազա՝ ա Մանալիի, Ոստիկանութեան Ընդհ. Պետ. Պահնաք Թաղմունքի, Ներքին Գործոց Նախարար Ռասմի Միրզայի, երկրագործական Նա-

նեմակ ծածկոցներ, մին Ս. Աստուածածնայ Տաճարին, միւսը՝ Ս. Յակոբայ համար :

38. — Երուսաղէմէն Տիկ. Զապէլ Երկաթեան, մէկ Աւագ Սեղանի ներմակ ձեռագործ ծածկոց :

39. — Երուսաղէմէն Տիկին Էլիզ Մամեան, մէկ ականազարդ ոսկի մատանի Գեղեցիկ Աստուածամոր նկարին :

40. — Կ. Պոստէն Աննա Պետրեան, մէկ սեղանի ձեռագործ ծածկոց Ս. Գլխադրին :

41. — Աղեքսանդրիայէն Տիկ. Իւզաբեր Բամպուկեան, երկու զանգելա Ս. Սեղանի ծածկոց Ս. Գլխադրին :

42. — Աղեքսանդրիայէն Տիկ. Պրաթրիս Խուսկանեան, մէկ ասեղնագործ Ս. Սեղանի ծածկոց Ս. Գլխադրին :

43. — Երուսաղէմէն Տիկին Ուսաննա Վարդերեսեան, մէկ ձեռագործ կորբուրայ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին :

Լուսարարայէն Ս. Արուստյա ՇՆՈՐՀՔ ԵՊՍ. ԳԱՍՈՒՍՏԵԱՆ

խաւար Ազգէ Ճապէզի, Ն. Վ. Սամիր Ռիճայիի Նեւալոյսի նախագան նշանակուած ըլլալուն առքիւ, Հանրային Շինութեան Նախարար Եազուպ Մուսամարի, Հաղորդակցութեան եւ Արշարութեան Նախարար Անվար Նեւեհպիի՝ պետական յասուկ շխնշաններով պատուուած ըլլալուն առքիւ :

Աստուծմէ ստացուեցան փոխադարձ շնորհակալութեան յասուկ հեռագիրներ :



## Ե Կ Ե Վ Ե Տ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 1 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ուր բարոզեց Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, համառօտակի խօսելով մեղքերու տեսակներուն եւ անոնց իւրաքանչիւրին քանդիչ եւ ազականիչ յատկութիւններուն մասին :

● Բշ. 2 Նոյեմ. — Ս. Յովսէփայ Աստուածամոր տունն առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի զերեզմանին վրայ. Ըստ սովորութեան, պատարագիչն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան :

● Շր. 7 Նոյեմ. — Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. զլիսաւորութեամբ, Միաբանութեանը «Հրաշափառառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, Ս. Գերեզմանին եւ Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, թափօրը բարձրացաւ վերջնոյս կից՝ Ս. Գրեգոր Լուսաւորչի հայապատկան եկեղեցին՝ ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատունակը, Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս : Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան :

● Կիր. 8 Նոյեմ. — Գիւտ Խաչ : Գրեշտային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ ժամաբարն էր Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան : Ապա կատարուեցաւ ետագործ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ, նախադահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. յոր, ամպհովանի ներքեւ, Կենաց Փայտի ճանաչազեղ մատուցն ի ձեռին, կ'օրհնէր Տաճարը խննուած հոծ բազմութիւնն ու Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը Ս. Գերեզմանի դրան երգուեցան «Տէր ողորմեա» եւ «Խաչի քո Քրիստոս» : Թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ երբ զրեթէ կէսօր էր :

● Կիր. 15 Նոյեմ. — Չեռնաղբութիւն կուսակրօն Քահանայի (Տես էջ 283) :

● Ուր. 20 Նոյեմ. — Ս. Հրեշտակապետաց տունն նախատունակը պաշտուեցաւ համանուն եկեղեցւոյ մէջ : Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. : Նախատունակն ետք կատարուե-